



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02 » 10 2017 թվականի N: 110 ք.Գյումրի

ՄԵՍՐՈՊ ԲՂՆՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եվ սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատարի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եվ սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Մեսրոպ Բզնունուն գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունում կայանալիք էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման հետ կապված քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 1 օր՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ին:



Իսկականի հետ ճիշտ է

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ